

Թողու տալով նաև տապանագիրը «նշանա-  
ւոր» մեծ խոյածեւ շիրիմ Մանուկ Նազարի:  
«Այս է համգիստ Մանուկ Նազարիմ ԹՎ. ՌԻԿ»:

Եթէ ընդունինք Հ. Ալիշանի կարծիքը եւ  
Յօջայ Սաջիկի հայր նկատենք Մանուկ Նազար  
Ջուղայեցին, որ, ըստ տապանագրութեան,  
մեռած է ՌԻԿ-ին, այսինքն՝ 1578-ին, այն ա-  
տեն մենք Յօջայ Մանուկը չենք կրնար համա-  
րել «նախահայր մեծատուն տոհմի Լազար-  
եանց հիմնողաց ուսումնարանին կամ ձեմա-  
րանին ի Մոսկուա» ինչպէս որ կը գրէ Հ. Ա-  
լիշան, որ կ'երեւայ թէ չիոթած է Լազարեան  
զերգաստանի նախահայր Յօջայ Մանուկը (որ  
1605-ին ողջ էր եւ Նոր Ջուղայ գաղթեց) Հին  
Ջուղայեցի Մանուկ Նազարին հետ, որ հաւա-  
նարար ըլլայ Յօջայ Սաջիկի հայրը:

Նոր Ջուղայի թիւ 459 ձեռագիրը, գրեալ  
եւ ծաղկեալ Սպահան Մեսրոպ Սիդանցիէ,  
ունի մեզի համար խիստ շահեկան յիշատա-  
կարան մը, որ աւելի կը պարզէ Յօջայ Սաջի-  
կի եւ իր զաւակներուն ինքնութիւնը: Էջ 268.  
«Ոմն ի լուսածնեալ զարմից. Սաթուն Ազատն  
որ ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս  
այսմ մարգարտաշար լուսարթիթ սուրբ աւե-  
տարանիս ետ գրել յիշատակ բարի հոգոյ իւ-  
րոյ... ետ գրել զսուրբ աւետարանս եւ զար-  
գարել ոսկեով եւ երանգերանգ ծաղկով. յի-  
շատակ իւրն եւ իւր ծնողացն, հօրն, Պարոն Յօ-  
ջայ Սաջիկին եւ մօրն Մարիամին. եւ եղբարցն  
Պարոն Յօջայ Սաֆարին եւ Պարոն Յօջայ Նա-  
զարին եւ քուերն Սաթուն Եղտիհասին. եւ ա-  
մենայն արեան մերձաւորացն ամէն»:

«Արդ որք ճաշակէք... աստուած ողորմի  
ասացէք եւ ստացողի լուսապայծառ սուրբ ա-  
ւետարանիս: զՅօջայ Սլէմանն եւ զիւր ամու-  
սինն. զՍաթուն Ազատն եւ զիւրց զաւակքն.  
զՍանդատէն, զԲարգատէն, զԱմիր Սարգիսն  
եւ Պարասկեւին եւ զԹազուհին, եւ զորդի  
Սանդատէի զՄիքայէլն ամէն: Այլ եւ զարձեալ  
յիշեցէք զՅօջայ Սուլեմանն եւ զԾնողսն Յօջայ  
Վալին եւ զՍուլեմանն եւ զամենայն արեան  
մերձաւորս յիշեաց»:

Այսպէս մենք կը գտնենք ոչ միայն Յօջայ  
Սաջիկի երկու որդիներ (երեք, ինչպէս որ Յօ-

ջայ Սաֆարի կենսագրութեան մէջ պիտի տես-  
նենք) այլ եւ երկու աղջիկներ, այլուր ան-  
ծանօթ եւ միայն Նոր Ջուղայու վանքին թիւ  
459-ին մէջ յիշուած: Աղջիկներէն Սաթուն Ա-  
զատն իր կարգին ամուսնացած է Յօջայ Սլէյ-  
մանի կամ Սուլէյմանին հետ: Այսպէս, ան իր  
կարգին տէր կ'ըլլայ զաւակներու, որոնց ա-  
նունը չէ մոռցած յիշել իր յիշատակարանին  
մէջ:

Նպատակ ունենալով միայն այս գերզաս-  
տանի երեւելի արանց մասին խօսիլ, կ'անցնիմ  
տոհմին այս իրական շարքին վրայէն:

Անդրանկութեան կարգով Յօջայ Սաֆար  
տարեքով աւելի մեծ է Յօջայ Նազարէն, ուստի  
հոս կը սկսիմ տալ Յօջայ Սաֆարի կեանքին  
մասին ինձ ծանօթ նիւթերը:

#### ԽՕՋԱՅ ՍԱՖԱՐ

Որոչ կերպով իր Յօջայ Նազար եղբօր չափ  
համբաւ չէ ունեցած ան: Սակայն, իր մասին  
մեր պատմութիւնն ունի բաւական յիշատա-  
կութիւններ, որոնց ի մի ամփոփումը աւե-  
լորդ չեմ նկատեր:

Տէր Յովհաննէանց կը գրէ թէ՝ «Յօջայ Սա-  
ֆար վախճանեցաւ ի 1067 թուականի Հա-  
յոց»<sup>1</sup>), այսինքն՝ 1618-ին, եւ նոյն գրողին  
կողմէ ներկայացուած տապանագրին համա-  
ձայն (որ իր կարգին ամբողջութեամբ պիտի  
տամ) Յօջայ Սաֆարի մասին կ'ըսուի.

«Էր սա ամաց ԾԵԻ»:

Այսինքն թէ՝ Յօջայ Սաֆար 1618-ին մե-  
ռած ատեն 55 տարեկան էր, ուրեմն, այդ հա-  
շիւով ծնած է 1563-ին:

Իր ընտանեաց մասին իր որդին՝ Պարոն  
Ջալալ Բէկ Նոր Ջուղայի թիւ 477 մագաղաթ  
1300-ին գրեալ աւետարանին մէջ իւր ստացող  
աւելցուցած է հետեւեալ շահեկան յիշատակա-  
րանք, էջ 2բ, տարբեր գրչէ, բոլորովի.

«Ըստացողին. պարոնաց պարոն Ջալալ Բէ-  
կին եւ ընտանեաց իւրոց բնաւին. եւ հաւին  
իւր պաշաղիտին. Սալան Սաֆար բարեբաս-  
տին մօրն իւրոյ Սալթան փաշային. լուսով  
յցուի իւրեանց հոգին: Այլ եւ եղբարք իւր նա-

1) Պատ. Նոր Ջուղայու:— էջ 88: